

891.99.09

r-74

0.31.2.09-10

h - 74

ՍՍ.ՐԳ.ԻՍ ԻՍՍ.ՀԱ.Կ.Ա.Ն.

Այ.



ԺՈՂՈՎՈՒՐԴԵՐ

Ժողովրդական Լեկեների մէջ.

(Գծեր ժողովրդական երգարանից)

Жародъ въ жародныхъ пѣсняхъ.

(Штрихи изъ народного пѣсенника).

Саркисъ Исаакіанъ.

БАКУ.
Электронпечатня газ. „Баку“.
1910 г.

73 APR 2011

891.99.09-13
Ի-74

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼԵԼԵՆԵՐԻ ՄԷՋ

(Գծեր ժողովրդական երգարանից).

lib. 18.530
31844

Ж а р о д ъ вѣ народныхъ пѣсняхъ.

(Штрихи изъ народного пѣсенника).

Саркисъ Исаакіанъ.



БАКУ.
Электропечатня газ. „Вану“.
1910 г.

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Այս գրքոյկը հրատարակելու նպատակն է՝ տալ ընթերցողներին ժողովրդական կեանքից մի թեթև, գիտական-ժողովրդական, եթէ կարելի է ասել, բնաւորութիւն ունեցող աշխատութիւն: Այստեղ համախմբւած են ժողովրդական երգարանիչ որոշ գծեր՝ նկարելու համար ժողովրդի առօրեայ կեանքի պատկերը, և աւելի ուշադրութեան են առնւած նրանցից կարևորագոյնները, քան մանրամասները, որոնց ամփոփելու համար, թերևս, հարկաւոր լինէին ֆօլիանտներ: Չպէտք է ուրանալ, որ, այդ պատկերի ամբողջացման տեսակէտից, կարելի էր աւելի կանգ առնել լէլէների վրայ և այս դէպքում՝ նորանոր օրինակներով և լուսաբանութիւններով: Վերջինները առաջ են բերւած զգուշաւոր ձեռնադհուկեամբ, մեծ մասամբ քառեակներով, գրքի ծաւալը չընդլայնելու և բովանդակութիւնը ճապաղութիւնից զերծ պահելու համար: Նմուշները քաղւած են՝ „Ռամկական մըրմունջներ“ (1901 թ.), „Տաղեր և խաղեր“ (1900 թ.) և „Սոխակ Հայաստանի“ (1902 թ.) երգարաններից: Լէլէներից շատերն էլ առաջ չեն բերւել՝ նրանց հանրածանօթ լինելու պատճառով, իսկ հարցառէր ընթերցողներին ամբողջական գաղափար տալու համար, իւրաքանչիւր օրինակին

յարակցեալ են աղբիւրը և էջը: Գրքոյկի բուն նպատակն է որոշ հետաքրքրութիւն գարթեցնել զէպի ժողովրդական մտացեալ լէլէն, որը, զժբախտաբար, ներկայումս փորձեր են անում նոյնիսկ արտաքսելու դպրոցից, և որը կազմում է մի թանկագին հոգեկան կապիտալ ժողովրդ. ստեղծագործութեան շրջանում: Այդ տեսակէտից, եթէ յաջողեւէ այստեղ ինքնուրոյն աշխատութեամբ ցոյց տալ զէթ մասամբ ժողովրդական գողտրիկ մրմունջների նշանակութիւնը և նրանց ուսումնասիրելու կարևորութիւնը,—նշանակում է նպատակը իրագործեալ է:

Սարգ. Իսահակեան.

1910 2 յունւարի.
Բագու.

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼԵԼԵՆԵՐԻ ՄԵՋ.

(Գծեր ժողովրդական երգարանից).

Եթէ կան մեղանում շատ թէ քիչ հարազատ աղբիւրներ, որոնք արտացոլում են ժողովրդական կեանքի պատկերը իր ելեւջներով, դրանցից մէկը, անշուշտ, ժողովրդի մէջ հիւսնող սիրուն լէլէներն են: Այդ լէլէները, իբրև հոգեկան տրամադրութեան արդիւնք, բնորոշում են ժողովրդի հաւաքական կեանքի ներքին յատկանիշները, ամփոփելով ժողովրդական անգիր բանահիւսութեան զգալի մասը: Այդ տեսակէտից սխալ չէր լինի ժողովրդին փնտրել հէնց իր երգերի մէջ:

Ժողովրդական լէլէն, սակայն, բացի գիտականից, ունի և որոշ գեղարւեստական նշանակութիւն, պահպանելով իր մէջ հայ երգի ուրոյն համ ու հոտը, բնական տաքութիւնն ու հրապոյրը:

Ամեն մէկս սիրում ենք տեսնել մեր հոգեկան կեանքը ուրիշի արտայայտութեան մէջ, և ինչքան էլ կոշտ ու կոպիտ լինեն այդ արտայայտութեան գեղարւեստական ձևերը, նրանք ընտանի են մեզ համար ու դուրեկան, եթէ լալիս են ու ծիծաղում մեր սեփական արտասուքով և ծիծաղով: Նկատի ունենալով ժողովրդ. ստեղծա-

գործութեան այդ բարձր արժէքը, պէտք է ցաւել, որ մեր գողարիկ լէլէները կորչում են այնպէս, ինչպէս ստեղծւում, որոշ շրջան բերնէբերան անցնելուց և փոփոխութիւններ կրելուց յետոյ, առանց դառնալու ժողովրդական զբաղանութեան սեփականութիւն:

Ժողովրդական լէլէները բաժանւում են բազմաթիւ տեսակների, որոնցից շատերը, զուրկ լինելով որոշ ամբողջութիւնից և ներքին կապակցութիւնից, ճիւղաւորւում են այնքան, որ նրանց իւրաքանչիւր քառեակը կազմում է երբեմն մի ուրոյն ստորաբաժին: Այդ պատճառով լէլէների տեսակները որոշելու համար պէտք է բաւականանալ որոշ մասերով, որոնք ցաք ու ցրիւ տաւածւած են այլ և այլ երգերի մէջ:

Սիրահարական բաժինը կազմում է գրեթէ ժողովրդական լէլէների ամբողջ միջուկը: Այստեղ երգւում է սէրը իր հետ կապւած բոլոր զգացմունքներով (տենչ, փափագ, յոյս, վիշտ, ցաւ, տանջանք և այլն): Այս մասում պարզ երևում է՝ թէ ինչպէս ժողովուրդը կարող է արտայայտել իր ամենաբարձր ուրախութիւնն ու տրամուլթիւնը: Մի տեղում սիրահարը հրճւում է իր «եարի» գեղեցկութեամբ և զովասանում նրան այսպէս.

Կապել ես քիրման գօտիկ,
Մարդ չես թողնում քեզ մօտիկ,
Համ տեսքով ես, համ հոտով,
Քանըզ ծաղիկ խորոտիկ:

Միւս տեղում նա անէծքի կոյտեր է թափում իր «եարի» գլխին կամ այն մարդու, որ

սկզբնապատճառ է եղել (սաբաբ) սիրահարւած զոյգի անջատման: Անիծւում են և տէրատէրները չհասութեան պատճառով. (Հաւը թաւ, թառն ելաւ: Մրմ. 252):

Թուխ ծամերդ թափւեն, դու ուշյան մնաս,
Օխտը տարի եօրդան-դօշկի մէջ մնաս,
Էլւում եմ աղջիկ, վառւում եմ աղջիկ
(Մրմ. 173).

Պառկել ես կակուղ հողին,
Մուրազս փորս թողին, ✓
Կարմիր գիւլուէն դիպնի
Գէտ մարդու կուշա ու կողին
(Մրմ. 147).

Եարին անիծելու հետ ժողովուրդը գիտէ և սիրել նրան, սիրել այդ զգացմունքի ամբողջութեամբ իր անէծքի առարկային, որովհետեւ սէրը, այդ չարաբաստիկ կրակը, երկսայրի սուր է, ատելու և սիրելու երկուսութիւնն է: Այդ սիրոյ գաղտնիքը թափանցելու համար, սիրահարը ուզում է, որ իր լեզուն «բալնիք եղնէր» (բանալի), իսկ եարի ծոցը՝— «Քրանկի» կողպէք («Տաղեր ու խաղեր», 97. «Էսօր շաբաթ էդնիր, էգուց կիրակի»).

օր. Դու ման կ'գաս վերի-վերի,
Կրակն ընկէ սիրս կերի,
Քու մօրն ըստ մէկն էլ բերի,
Կայնի սէյր անեմ, բոյիդ հէյրան եմ.
(Մրմ. 150).

Հետաքրքիր են այստեղ այն հայեացքները, որ ժողովուրդը արտայայտում է իր երգերի մէջ և որոնք շատ հազւագիւտ են ժամանակակից

ամուսնութեան ու սիրոյ հաշիւներում: Արտա-
քին պայմանները, փայլը, փողը և այլն իրանց
ամբողջ թուլշուրթեամբ վարդի փշեր են, իսկ սի-
րով ամուսնութիւնը կեանքը քաղցրացնող նուշ
է: Երևում է, որ ժողովուրդը երբեմն աւելի
լաւ է ըմբռնում սրտի ընտրութեան նշանակու-
թիւնը, քան աչքի:

օր. Նշի ծառին նուշ կըլինի,
Վարդի ծառին փուշ կըլինի,
էրնէկ էն աղջկանը,
Սիրած եարին դուշ կըլինի

(Մրմ. 230).

Թէև երբեմն էլ այդ հայեացքները հակա-
սում են միմեանց. օր. մի տեղում աղջիկը «մալ
ու դովլաթ» չէ ուզում, այլ սրտով սիրած եար,
իսկ միւսում փողը, գլխազինն է (բաշլըղ) կազ-
մում ամուսնութեան միակ շարժառիթը:

օր. Էս եանը պատ ա,
Էն եանը պատ ա,
Քաղքցուն կառնիմ,
Որ փարէն շատ ա.

(Մրմ. 185).

կամ՝ Անտօնի ջէբի խազար,
Աշխէնին պեցեք բազար,
Անտօնի դռան գերան,
Աշխէնն ընկաւ բերնէ-բերան:
(Մրմ. 180).

Սիրահարական մասում մեծ տեղ են բռնում
այն երգերը, որոնք ժողովուրդը կապում է սի-
րային այլ և այլ արկածների, սպանութեան,
առեանդման և այլ դժբախտութիւնների հետ:

Նյս հանգամանքը ցոյց է տալիս թէ ժողովրդի
այդ տեսակ երգեր հիւսիսու ընդունակութիւնը
և թէ ինչպէս այդ դէպքերը հետաքրքրում, զբա-
ղեցնում են նրան: Ո՞ւմ ծանօթ չէ այժմ քա-
ղաքացիական դարձած «Աշխէնի երգը» (Թալի-
շու ձամպէն դուզա, Մրմ. 179), արմուխեցի
Պաշօի սպանութիւնը (Ես Պաշօն եմ արմուխե-
ցի. Մրմ. 164), Պանում Եւայի երգը (Բերդիցը
դուրս ելա. Մրմ. 83), որտեղ չամբլեցի (Ապա-
րանում) Ալէքի բանտարկութեան դէպքն է յիշ-
ւում, մաստարեցի Զուլօի երգը (Ես Զուլօն եմ
մաստարեցի. Մրմ. 165), բայազէտցի Կօստօյի
սպանութիւնը (Մրմ. 188) և այլն:

Դժբախտ արկածների շարքը կարելի է
դնել և զինուորագրութիւնը,—բնորոշելու հա-
մար լէլէների ողբերգական տեսակը, որի վրայ
հէնց այդպէս էլ նայում է ժողովուրդը, շատ
անգամ նոյն իսկ ողբում: Սրտառուշ են այստեղ
առանձնապէս «Ազու երգը» (Ազու դարդերն էր
սարերով. Մրմ. 167), ապարանցի Աղէկի երգը
(գեղովի թօփ եղան մէկ գիր գրեցին. Տաղեր ու
խաղեր. 88) և այլն, որոնք մէջ չեն բերւում
հանրածանօթ լինելու պատճառով: Կան այստեղ
և մի շարք լէլէներ, որոնց մէջ երևում է ժողո-
վրդի հաւատը դէպի ճակատագիրը և նրա նախ-
որոշումը:

օր. Ծաղիկներս դեռ չէ ջրած,
Ճակասիս սեւ գիր է դրած,
Անուշ եարիս հետ ապրելու,
Վաղ ուխտ ու պայման եմ դրած:
(Մրմ. 235).

Ուշադրութեան արժանի է և այն, որ սիրա-

հարական շատ երգեր հարց ու պատասխանով են երգւում (ընդդիմախօսութեամբ) աղջկայ և տղայի կողմից: Այսպեղ ամենից հետաքրքիրը աղջկայ ցանկութիւններն են, երբեմն և «ինատը» (իմ մէջը քեղ աղջիկ չի տայ), իսկ տղայի աղաչաւոր դրութիւնը: Ամենից լաւ օրինակը այս բանի համար «Աղլուխս կորաւ ձեր դուռը» (Մրմ. 138) կամ հին «Վարդ-կօշիկս» երգն է (Մեր տան մէջը քնող տղայ. Սոխակ Հայաստանի. էջ 258), որտեղ աղջիկը կորցրել է իր աղլուխը կամ վարդ-կօշիկը և խնդրում է տղային տալ այն: Հետաքրքիր և զուտ բանաստեղծական է նաև «Ծամթել» երգը (իմ գլխու ֆութէն կիտամ), որտեղ գեղեցիկ կերպով նկարագրւում է թէ ինչպէս աղջիկը ձգել է իր ծամթելը ծովի մէջ և խնդրում է տղային, որ հանէ ծովից, խոստանալով նրան մերթ իր վզնոցը, մերթ ֆութէն, չանբարը, նոյն իսկ շապիկը, սրանոցը, թնոցը և այլն. իսկ տղան զլանում է, թէև լողւոր, կատարելու աղջկայ խնդիրը *.)

օր. Իմ գլխու ֆութէն կիտամ, (աղջիկը)
Դէ՛հ, խանտ ծամթելն ՚ի ծովէն,
— Լողւորի մէկէ էս եմ, (տղան)
Ձեմ խանի ծամթելն ՚ի ծովէն և այլն:
(Մրմ. 180).

Սիրահարական լէլէները մէջ գլխաւորապէս գովւում են և „մին ու ճար“ (Մրմ. 136) ու „տիրացու“ փեսացուները, որոնց առաւելութիւն է տրւում.

օր. Իմ եարը տիրացու է,

*) Կան և ուրիշներ, ինչպէս „Սօս և Գարեգինը“ (Վարդիթերի տեղը), „Երկու սիրահարներ“ (Գարալագեազի բարբառով):

Թամամ տէրտէրացու է,
Մաղերը որ վեր ունի,
Մի գեղի քեօխվացու է: (Մրմ. 258).

Հետաքրքիր է և տիրապետող կարծիքը փեսայի մասին, իբրև անյուսալի, երախտամոռ մարդու.

օր. Թաւէն ծակէ, եղ չկայ,
Փեսէն եկաւ, տեղ չկայ,
Փեսին շատ երես միք տայ,
Փեսին էյրիբար չկայ:
(Մրմ. 187).

Աչքի է ընկնում այսպեղ և մի բան— դա հայ գեղջիկուհու ինքնահաւանութիւնն է (էջի ու նաղ ունի, խունջիկ-մունջիկ է լինում).

օր. Սարի սիրուն նարգիզ եմ,
Տուտի եմ, էրկէն վիզ եմ,
Շատ ջահիլներ միջից
Սրտով սիրածիս կուգեմ. (171 Մրմ.
Սարի թրթնջուկ թագա):

կամ „Այ պուճուր աղջիկ“ (Մրմ. 142).

Կամ այդ գեղջիկուհու ամուսնանալու փութկոտութիւնը, որ մասամբ արդիւնք է աղջըկներին անչափահաս կամ մատաղ հասակից ամուսնացնելու ընդհանուր, պակասաւոր սովորութեանը: („Իմալ էնիմ, իմալ էնիմ, եար պգտիկ ու շարեր իմ“): Ահա մի օրինակ, որի մէջ ժողովուրդը աղջկայ բերանով ծաղրում է հէնց նոյն աղջկան.

Թաք տանէին, տանէին, ցախաւելը
Թագւոր էնէին

Թաք տանէին, տանէին, գովէր կես-
րար էնէին.

Մասակը կեսուր էնէին, ոսկու տեղ
փուռ դնէին,
Ի՞նչու պոչը փրակիւ էնէին, քնդրին
չուր քողք էնէին և այլն:
(Մրմ. 190).

Սակայն, չնայած հայ աղջկայ ինք-
նակարծիքին, փութկոտութեանը և ընտրու-
թեան ճաշակին (փնտրում է ունջուխի—փուն-
ջուխի ետք), նա հլու, հպատակ է ծնողական
իրաւունքի և որոշ «առևտրական» սկզբունքի
առջև, որոնք տնօրինում են նրա բաղդը, ինչ-
պէս կամենում են.

օր. Ծիրան եմ ծառի ծէրին,
կերերամ հետ թերերին,
եկան, քաղեցին տարան,
Ծախեցին ախմախներին: (Մրմ. 246)

Լէլէները մէջ կարմիր թելի պէս աչքի է
ընկնում մի երևոյթ, այն է նրանց մէջ յիշուող
թշնամիների բաղմութիւնը (գէշ մարդը), որ հա-
լածուում, տնիծուում է իւրաքանչիւր քայլափո-
խում: Կարիքը՝ միացած շատ անգամ կեանքի
այլ պայմանների հետ, խճճել է ժողովրդի փո-
խադարձ յարաբերութիւնները. այդ պատճառով
էլ ժողովրդական երգերը, որոնք բղխում են նը-
րանց փոխադարձութիւնից, զերծ չեն նոյնա-
նման տխուր դրօշմից: (Մրմ. 147 „Չուն ա
եկել“—բամբասանք).

օր. Ամպեր մի քիչ հով արէք,
Անձրև թափէք, ծով արէք,

Գլե մարդի էլ ու գիւնը
Սև հողի տակով արէք:
(Տաղեր ու խաղ. 138).

Ոչ պակաս հետաքրքիր են և այն երգերը,
որոնց մէջ երևում է ժողովրդի աշխարհայայաց-
քը կեանքի, «դունեայի», «աստուրի» և այլն
վերաբերմամբ, որոնք նոյնպէս մասամբ կապւած
են սիրոյ հետ (Մրմ. 120. դարս. երգը): Հե-
տաքրքիր են նրանք և այն սպառնալու, որ իրենց
յատուկ, անպաճոյճ ձևով երբեմն շատ խորիմաստ
են և ցոյց են տալիս՝ թէ կեանքի իսկական փի-
լիսոփայութիւնը, յիշաւի, այն ժողովրդի մէջն է,
որտեղից այդ գողտրիկ լէլէներն են դալիս.

օր. Արի, եար, արի, խուով մի կենայ,
Աստուրիս բան, եար, մզիկ չի մնայ:
(Եօթն օր, եօթ գիշեր. Մրմ. 93).

Հարուստ է և ժողովրդի երևակայութեան
շրջանը, բովանդակ կեանքը առանձնապէս վիշտ
և սէր բանաստեղծելիս կամ բնութիւնը նկարա-
գրելիս: Այս շրջանում մեծ տեղ են բռնում
նկարագրական-հովերգական բնաւորութիւն ու-
նեցող լէլէները (Մրմ. 170. „Տուն եմ շինել
գետափին“): Այստեղ «եարին» գովելիս նմա
նութիւնների փոխառութիւնը ժողովուրդը կա-
տարում է իրան շրջապատող բնութիւնից կամ
միջավայրից (որոնց ներքին գեղեցկութիւնը
զգալու գաղտնիքը նա լաւ գիտէ), այսինքն աւե-
լի իրական հողից, քան եթերից: Այս մասում
երևում է ժողովրդի հակումը գէպի իրերի բնա-
կան դրութիւնը: Միջավայրը կամ շրջապատը
ամենագօրեղ գործօններն են այստեղ ժողովրդի

մաքի ու երեակայութեան աճման և աստիճանական կազմակերպման գործում: Եթէ միջավայրը նկարչական ու գեղատեսիլ է, միտքն ու երեակայութիւնը բարդուում են լեռների, հովիտների, ձորերի, գետերի, անտառների և այլ ուժեղ տպաւորութիւններով, իսկ դաշտային տեղերում—պրօշայիկ կեանքն է թևատարած իշխում իր միօրինակ ու մօնօտօն ախրութեամբ: Կարծես, իւրաքանչիւր քայլափոխում ժողովուրդը փնտրում է մի մօտ բան, որպէսզի նրա մէջ զնէ իր միտքը, լեզուն և նկարագրելու, համեմատելու կարողութիւնը (Սիրուն ես ծաղիկի նման. Մրմ., 194): Տան թոնրի մուխը (պրօշայիկ երեկոյթ) նա նմանեցնում է թուխ աչքերին և կամար ունքերին (Մրմ., 145 «Լուրիկ»): Գետի (Չրի) լափ տալը, երկու խնձորի ծափ տալը (Չրի երեսին) և թուխ գդակի թափ տալը—տարբեր բաներ են, բայց որքան բանաստեղծականութիւն կայ այդ երեքի գեղարուեստական կապակցութեան մէջ.

օր. Զուր ա գալի լափի տալէն,
Երկու խնձոր ծափ տալէն,
Հրէս եկաւ իմ ետքը,
Թուխ գդակը քափ տալէն. (Մրմ., 211)

կամ՝ Անձրեն եկաւ ճաղալէն
Ուռ ու տերեւ դողալէն,
Հրէս եկաւ իմ աղբէր,
Այ ձին տակին խաղալէն:

(Սոխ. Հայ. 183).

Զիւռ խաղալը (քայլածքը) նմանեցնում է շաղուն անձրեկին կամ ուռենու տերեւների դու-

ղալուն քամու շնչի առջև. որքան մօտ և նուրբ բանաստեղծութիւն...

Գեղեցկութիւնը գովասանելու համար ժողովրդին մեծ մասամբ օգնում է նշանը կամ բնութիւնը, որ գեղեցիկի բանաստեղծութեան մայրն է. իսկ իբրև համեմատական դրութիւն ծառայում է երբեմն և թռչունների շրջանը. ինչպէս օր. կաքաւը (դիրքը և շարժումները բնորոշելու համար), բիւլբիւլը (լեզւի համար) և այլ թռչուններ, որոնք կազմում են ժողովրդական գեղարուեստի սիմվոլիզմի ընտանիքը: Կռռունկն ու ծիծեռնակը համարւում են համբաւբերներ, անձեղը (ագռաւ)—չարագուշակ է: Միւս կենդանիներից՝ մարալը և ջէյրանը, իսկ ծառերից՝ չինարը, նռնենին մեծ տեղ են բռնում մարմնի վայելչակազմութիւնը նկարագրելու: Սիրոյ նշաններ են՝ թաշկինակը, խնձորը, սաղրի, կարմիր սօլերը և այլն: («Հօյ նազանմ». Մրմ., 222).

օր. Իմ ետքը ծառի տակին,
Սաղմոսը կռան տակին,
Սաղմոսն անգիր է արել,
Լեզուն բիւլբիւլ է դառել:

(Մրմ., 153).

Նկարագրական մասում մեծ դեր են խաղում՝ ետքի ծծերը, որոնց սիրահարը «հասարթ» է (կարօտ) և որոնք նմանեցնում են շամամի (բուրաստանն է երեակայութեան շրջանը), իսկ ետքը անւանւում է՝ ջիւան, թառլան, սաւգիւլ, թաւադ, եղընեկ (աղանի), թօսուն, գեօզալ, մարալ, սարերի կամ չօլի ջէյրան (բնութիւնից), թուրինջ (թաղաւորի խառ բախշում բուսած. Տաղ, ու խաղ, 152).

օր. Մի բարձ եմ արել, իմն ա,
Միսն էլ եմ արել, իմն ա,
Գեանջու քարվանն գալիս ա,
Միջի քաւաղն էլ իմն ա.

(Սոխ. Հայ. 184).

Նշանակութիւն ունի և հագուստը, մանա-
ւանդ սիրահարութեան արտաքին պայմաննե-
րում. ինչպէս աղջկայ՝ դէյրան, շալը, կրծկալը,
փողպատը, իսկ փեսայի՝ «բաշըղը», վզակապը,
քամարը, արխալուղը, սօլերը, «ծուռ» փափա-
խը և այլն.

օր. Իմ եարը դուռ կըդնէր,
Գօտիկը նուռ կըդնէր,
Ես կմեռնեմ էն եարին,

Փափախը ծուռ կըդնէր: (Մրմ. 183).

Նկարագրականի ամբողջութիւնը լրացնում
են հետեւեալ նաշխերը. նուշուփար, ջաւահիր,
բալասան, ուէհան (հոտը), շուշան, համասիւրու
և այլն. չինար՝—հասակը, լուսնեակ, արեղակ՝
—դէմքը, նազանի ու կաքաւ՝—քայլւածքը, մեղր
ու նաբադ, դանդ ու շաքար՝—շրթունքները,
սաղրի, կարմիր, կանանչ՝—սօլերը, լալազար,
խալ, թուխ՝—երեսը (կամար ունքերով), ապրէ-
շում՝—ծամերը կամ «զիլֆերը», խաժումամ՝—
աչքերը, զար, ալ ու կանանչ՝—գոյները (սի-
րոյ և յուսոյ նշաններ), քարերը՝—ըռուքեար,
մարմար (դօշը), եաղութ և այլն: Շորերը՝—
կլապիտոն, զար ու զարբար, բուրդօ, ֆանէլ,
մախմուր, դնաւուզ, բաղդադի, քաթիպա, դու-
մաշ, Հնդու-շորերը (Հնդկաստանի կերպաններ),
նշխուն միզարը, քօֆիկը, խօրօտ ու պտպտուն
բջերը (գուլպա), գլխի լաչին, երեսնոցը, քթկալը:

Յիշուում են նմանապէս յաճախ ոսկէ կամ ար-
ծաթէ ապրջանները (ապարանջաններ), աչքերի
դեղ ու դեղդիր և հետեւեալ համեմատութիւն-
ները, թուշը՝—խնձոր, ունքերը՝—սև աղեղնակ,
կեռ ու կամար, պոօշը՝—նռան կեղև, դօշը՝—
սիպտակ մարմար, առամները՝—սատաֆ, մատ-
ները՝—մեղրամօմ, ձեռները՝—շարմաղ և այլն.

օր. Առաւօտուն քունդիր մուխ,

Կլոր աչքեր, ընկներ քուխ և այլն.

(«Լուրիկ», Մրմ. 145)

կամ էս սարը բանձր սար է,

Տակը զանջրու քար է,

Առածս մէկ ու ճար է,

Հագածը ըռուֆաւ է. (Մրմ. 136).

կամ՝ «Աղջի, շորերդ իսպահի,

Հիւղու կարած լմանի» և այլն.

(Մրմ. 220).

Ժողովրդի մէջ մի տեսակ բնագդ կայ բը-
նութեան երևոյթների մէջ տեսնելու իր սպա-
սելիք դժբախտութիւնը կամ նրա այս ու այն
եղքը (զարդիցս խաբար տւէք, սարեր...):

Այդ բնագդը շատ անգամ մարմնանում է ժո-
ղովրդի աչքի առաջ, երբ նա իր ամբողջ էութեամբ տարւում, անձնատուր է լինում նրան: Այդ ժամանակ զետը իր պղտոր ալիքներով, իր արագ հոսանքով, բնութիւնը իր ուրախ կամ տխուր տեսքով նա համեմատում է իր վիճակի հետ.

օր. Արազից ջուր ա գալիս,

Չգիտեմ, ուր ա գալիս,

Մի լաց, սիրուն սիրական,

Բաժանման լուր ա գալիս. (Մրմ. 136).



կամ՝ Ծառներ, դուք ծիրան միք տայ,
ձղներ, դուք էլ բար միք տայ,
Ես դաւրդիւ եմ, դռնախ եմ,
Դաւրդես իրար միք տայ. (Մրմ. 178).

Թող ծառերը դադարեն իրանց բնական
պրօցէսսը կատարելուց, թող նրանք չծաղկեն,
օ՛, այլապէս կրկորչի մարդկային հոգու և բնու-
թեան մէջ եղած ներդաշնակութիւնը, այն գաղտ-
նիքը, որ մարդու հոգեկան բեռի մի մասը փո-
խադրում է բնութեան մէջ՝ յարաբերական դը-
րութիւն ստեղծելու համար:

Սիրոյ կամ վշտի շանթի բոպէին ժողովուր-
դը մի կարեկից ունի—մայր բնութիւնը: Այդ
հոգեկան բոպէին բնութեան և նրա գրկում ապ-
րող ու տանջւող մարդու մէջ, կարծես, մի տե-
սակ հոգեկան յարակցութիւն կայ, որ մարդ-
կային վիշտը միախառնում է անհունութեանը:
Եւ այդ յարակցութիւնը մարդու հոգուն յատուկ
մի տեսակ հակումն է, որ վշտի ծանրութեան
միջոցին անհունութիւնից է սպասում իր ամո-
քումը.

օր. Հով արէք, սարեր ջան, հով արէք,
Իմ դաւդին դաւման արէք և այլն.
(Մրմ. 219):

կամ՝ Լուսնեակ, դու անցի, գնա (բնու-
թեան երևոյթներին),
Կանգ տուր ու էնպէս գնա,
Որտեղ որ եարիս տեսնես,
Բարեւ տուր, անցի, գնա.
(Տաղ. ու խաղ. 150).

Բնութեան մէջ երևոյթներն ունեն իրանց

հակադասութիւնները, առանց որոնց այնքան էլ
պարզ չէր լինի նրանց գրական կողմը: Ներհակ
գաղափարները՝ „պիտակն ու սեւ“, „շիւղն ու
գերանը“ գործ են ածւում լէլէների մէջ միտքը
ուժեղացնելու համար.

օր. Սեւ ամպերը պարզում չէ,
Սիւսակ եայլուդ սազում չէ,
Օխտը տարի ալ հագնեմ,
Սիրաս ուն ա, սազում չէ. (Մրմ. 246).

կամ՝ Խաւիժ եմ էրէ եղով,
Կըտըժտըժայ մըջ թաւին,
Եւր, էլ զուր ա քու դարման
Իմ էրւած սրտի հաւին:
(Ապարանի լէլէներից).

Սրտի „հաւան“, այդ տարերային մըրիկը, հա-
մեմատութեան մէջ է դրւում մի շիթ իւզի հետ,
որ պիտի տըժտըժայ ու անհետանայ թաւի մէջ
անձայն, անծուք... Իսկ սէրը, սրտի այդ ցնոր-
քը, — հաւայի (եղանակ) կամ քամու հետ, որ
միկնոյն քմահաճոյքներն ունի...

Լէլէների մէջ (կրօնա—բարոյական) յիշում
են նաև շատ ժողովրդական սովորութիւններ ու
հաւատալիքներ, ինչպէս մուրազի, ծոմապահու-
թեան, ուխտագնացութեան, սզի (սև հագնելու)
և այլն: Սրբերից մուրազատու են համարւում
գլխաւորապէս «Մշու—Սուլթան» ս. Կարապե-
տը և „գինաւոր“ ս. Սարգիսը (Մրմ. 169),
որոնք ոտաւորին տալիս են մուրազ, իսկ ձիա-
ւորին նաև ոսկէ խնձոր.

օր. Սուրբ Կարապետ բարձր բոլոր,
Ճամբէք ունի ոլոր-մոլոր,

Ուր գուռ կերթայ շատ ուխտաւոր,
Ո՛ր ոսաւոր, ո՛ր անաւոր
(Սոխ. Հայ. 320. «ս. Կարապ. երգը»).

Երգուում են և ուխտավայրերը, վանքերը
(ս. Կարապետքու վանքը, վայ լէլէլէ. Մրմ. 246)
և ազգային հին յիշատակարանները, ինչպէս՝
Էջմիածինը, Արազը, Մասիսը, Արագածը,
Մոզնին, Ծաղկավանքը, Անավանքը, Սեանը և
զանազան տնային սրբեր՝ «Կարմիր ու կանանչ»
աւետարաններ հային, որոնք ծառայում են յա-
ճախ իբրև սիրահարման տեղեր։ Տօներից գլխա-
ւորապէս յիշուում են Ծաղկազարդը և Համբար-
ձուումը.

օր. Կապուտակ ձին նստել եմ,
Արագին մօտեցել եմ.
Արագ ինձ մի ճամպա տուր,
Մասիսին կարօտցել եմ.
(Սոխ. Հայ. 196).

Իբրև ուխտի նշան (խորհրդանշան) յաճախ
յիշուում է «Եօթը», որը ինչոր խորհրդաւոր
բնաւորութիւն ունի լէլէներէ մէջ, ինչպէս՝ «Շ
տարի հիւանդանալ», «Շ տարի քուրն աղբօրից
կարօտ է», «Շ տարի սև հագնել» («Սև ունքեր
կամար—կամար». Մրմ. 245) և այլն, որ, գու-
ցէ, կապուում է «օխտանւան» հետ.

օր. Քարս տաշի, բոլրեցի,
Եարիս տեսայ, մոլրեցի, ✓
Անտէր մնար էն ուխտը,
Որ ես ընտեղ սիրեցի։ (Մրմ. 250).

կամ՝ Մուղնւայ գեօլը լողացայ,
(հաւատալիք)

Մուղնւայ շուշպէն գողացայ,
Օխտ տարի հիւնդցայ
Եարս եկաւ, լաւացայ:

Պակաս հետաքրքիր չեն և տօնական ու
հարսանիքի երգերը, կապուած հարսանիքի այլ և
այլ սովորութիւնների, ծիսակատարութեան և
որոշ տօների հետ, ինչպէս Համբարձման, Ծաղ-
կազարդի (ծառզարդերի), Տեառներնդառաջի
(Տէրնտէղի), Բարեկենդանի և այլն:

Հարսանիքի երգերը իւրաքանչիւր գաւա-
ռում իրանց առանձնայատկութիւններն ունեն.
ինչպէս՝ Դարալագեաղի, Բայազէտի, Մոկաց,
Վանի, Ղարաբաղի, Արարատեան (գլխաւո-
րապէս—Իգդիրի, Կողբի, Կօշի, Ապարանի), Ղար-
սի, Շիրակի, Լօռու և այլն։ Այստեղ լաց ու ծի-
ծաղը միախառնուում են. գովուում են հարսը
(մանաւանդ գլուխ կապելու ժամանակ) ընկե-
րուհիների բերանով, փեսան, սկեսուրը, կեսը-
րը, հարսի ուստէն (որի մօտ նա կար ու ձև է
սովորել), քաւորը, ազապները, պսակի շորերը,
հինսան և այլն.

օր. Բաղնեց ճամբէն չալին սաղըդ,
Նիս օր մանիս, կնկայ հազըդ,
Զխտակ նաթր հիւսին մազըդ,
Աղջի, մի լար, մի հեկեկար. (Մրմ. 81)
(Ղարսի քարաւանդ)

Ուշագրաւ են և այն երգերը, որոնք երգ-
ուում են փեսայի և աղջկայ (թագաւորի և թա-
գուհու) հանդերձները գովելիս, և որոնք երբեմն
համեմուում են թուրքերէնով¹⁾.

1) Ինչպէս պարերգերից մի քանիսը—բողբէնով՝ «լէպէ հօ, լէպէ...»

օր. Ասենք շընհաւոր, ասենք շընհաւոր,
Մեր թագաւորի չուխէն շընհաւոր և այլն.
(Մրմ. 74).

Տօնական երգերից բաւական է յիշել հան-
րածանօթ «Ջան գիւլումը» (որ երգւում է Համ-
բարձման տօնին, երբ ջուր են գողանում՝ աղ-
բիւրներից, ծաղիկներ քաղում և վիճակ են հա-
նում. Սոխ. Հայ. 183). «Ես օխչում քուր, դու
օխչում աղբէր» (Ապարանի բարբառով), որ երգ-
ւում է Ծաղկազարդին, երբ եկեղեցում գիւղի
աղջիկներն ու տղաները աւետարանի վրայ «օխ-
չում» քոյր և եղբայր են լինում և այլն.

օր. Գնացէք, տեսէք ո՞վ ա կերել այգին
(բարեկենդանին),
Գնացին, տեսան այժն ա կերել այգին,
Այժն ու այգին ձեզ բարիկենդան, մեզ
բարի զաւիկ.
(Մրմ. 89).

Որքան որ ուրախ ու վառվռուն են տօնա-
կան, նոյնքան տխուր, մեղամաղձոտ են աշու-
ղական, հայրենասիրական և պանդխտական եր-
գերը: Աշուղական—հայրենասիրական բաժինը,
որի վրայ պէտք է երկար կանգ առնել իր հան-
րածանօթ լինելու պատճառով¹⁾, կազմում է ժո-
ղովրդական երգերի գործածելի մեծամասնու-
թիւնը: Հայաստանը իր հետևողական պատմու-
թեամբ, աւերակներով, յիշատակներով ու նա-
հատակներով երգել է դարերէ 'ի վեր գոսան-
ների, (Գողթանի), աշուղների բերանով: Այս եր-
գերը իրանց մաղձով ու վարակիչ տխրութեամբ

¹⁾ Նկատի ունենալով, որ նրանք մասամբ ժողովրդական ծագում
չունեն.

համակում են մարդու հոգին և ցնցում նրա
զգայուն լարերը, ամենածածուկ խորքերը...

Մի տեղում Հայաստանը համեմատութեան մէջ
է դրւում այրիացած կնոջ հետ, որի առաջ կեան-
քը շուտ է բաց արել դժբախտութեան դուռը,
որտեղից փչում է միայն ցուրտ և սարսուռ...
միւսում՝ դառնաշունչ խորշակից չորացած այ-
գու հետ, որ երբեմն իր ծաղկման ու պշրանքի
շրջանն է ունեցել և իր սոխակը, երրորդում—
ձագուկները կորցրած այծեամի, որին անգուլթ որ-
սկանները գամվումներով ու բարակներով հալածում
են սարէ-սար, քարէ-քար... («Փախիր, այծեամ,
փախիր, որսկանն է գալիս». Զիւանի. Մրմ. 13),
չորրորդում—հաստարմատ և անւանի ծիրանու
հետ (Սոխ. Հայ. 124. «Ես մէկ ծառ եմ ծիրանի».
Զիւանի.), որ տերեւթափ ողբում է իր 4000-
ամեայ պատկառելի անցեալը, իր երկրէ-երկիր
բաժան-բաժան ընկած տունները, խոնարհելով
իր վսեմ կատարը անողոք ժամանակի նոր վճռի
առաջ... հինգերորդում յիշւում է Հայաստանի
անտէր ու անփառունակ դրութիւնը, որի հողի
ու ջրի սեփականութեան կասկածելի իրաւուն-
քը Հայաստանի լեռներին է մնացել որոշելու
(«Անխղճօրէն մեզ դատում են». Մրմ. 12).

օր. Իմ խնդրիս չեն դնում ականջ,
Ասում են—սուտ է քո պահանջ,
Այս հողերը ո՞ւմն էր առաջ,
Խօսի՛մ Հայաստանի լեռներ... (Պայծառ).

Հայրենասիրական բաժինն են պատկանում
այսպէս ասած դիւցազներգական բնաւորութիւն
ունեցող երգերը, որոնց մէջ զանազան ազգա-

յին հերոսներ անցնում են դիւյսադներգութեան շրջանը. (Մրմ. 95).

Ուշադրութեան արժանի է այս երգերի մէջ հայ մօր բացառիկ հայրենասիրական տիպարը, որը օրօրոցից սկսած մըմնջում է որդուն հայրենիքի սէրն ու գաղափարը. (Արաբօյի երգը).

օր. Խեղճ մշեցին մնաց լալով,
Հեռու երկրներ ման գալով,
Մեռաւ թուրքի պարտքը տալով
Ձարթիր, լա՛օ, օգնէ խայուն.
(Մրմ. 123)

Սշուղական երգերը, բացի հայրենասիրականից, ունեն և խորը փիլիսոփայական ու փոխաբերական բնաւորութիւն (օր. Զիւանու «Հօ» տառը. Մրմ. 35): Նրանց բնորոշելու համար բաւական է յիշել ամենքին ծանօթ «Ձախորդ օրերը» (Մրմ. 54 կամ Տաղ. ու խաղ. 56), «Անմիտ ճնճղուկը բազէի ճանկից... խելքի աշեցէք» (երկունս էլ Զիւանու. Մրմ. 119) կամ «Նաւաւար» (Պահլաւիկի. Մրմ. 119) երգերը: Վերջինի մէջ մարդու միակ մխիթարութիւնը կեանքի դառնութեան ըոպէին թշուառութեան ու վշտի նոյնանմանութիւնն է կամ ընդհանրութիւնը:

Սշուղներից, գլխաւորապէս, երգւում են՝ Զիւանին, Սայաթ—Նովան, Շիրինը, Պայծառ Տրդատեանը, Խայաթը, Սալմաստցի Յարութիւնը, Գր. Տալեան, Ֆահրադը և ապա Ղարիբը, Նազիրը, Մալիլը, Իմրանը, Թալալօղլին, Զուլալօղլին, Ղարանը, Զահրին և այլն:

Հայրենասիրականի հետ մասամբ կապւում են և պանդխտական երգերը, որոնց նիւթը պան-

դրխտագրութիւնն է, հային բաժին մնացած այդ դարաւոր դժբախտութիւնը, որը քայքայում է ժողովրդին թէ՛ տնտեսապէս և թէ՛ բարոյապէս: ¹⁾ Այստեղ հայ պանդուխտը մղկտուն շեշտով ու գալարումներով երգում է իր ընտանեկան յարկի, հայրենի օջախի տենչն ու կարօտը:

Կարիքը, կեանքի անարդար պայմանները (Մրմ. 251. «Վայլէլէ ջան») վիճակել են հային պանդխտութեան ցուպը և կտրել նրան իր հողից ու «վաթանից»: Նա օտար երկնքի տակ դադար չունի, հոգեկան դադար, իբրև էկզոտիկ բոյս, որին խորթ են տարագիր պայմաններն ու կլիման: Նա ման է գալիս այստեղ ձեռը ծոցում, գլխակոր, բեռի տակ ճնշւած և ոչոքից չճանաչւած... Նժդեհական կեանքը, չարքաշութիւնը վառում է նրա մէջ կրքի լեզուն: Սև աշխատանքը, դժւար «վաստակը» (Մըր խօր պապկէ գերեզման. Մրմ. 115), անողոք «փշուրըմ խացը» — սօցիալական պայքարի այդ օրհասական կռաւիճորը, ստիպում են նրան «ղուրբաթում» տարիներով չքանդել «միջաց գօտին», իսկ «սէֆիլ» եարը, ճժերը, մաճն ու արօրը լցնում են նրա ամբողջ էութիւնը անճարութեան սրտապատառ ցաւով... Նև ահա նա երգում է՝

Թորկեր իմ խեղճ, տկուր, զիմ ճժեր,
զիմ տուն,
Կոլորտիմ մէկ փեռու չոր խացի խամար.

¹⁾ «Սիրող», «սիրական» և այլ զունաւոր բառերը արդէն ցայտուն կերպով բնորոշում են այդ անկումը. օր. «Ապարան գնացող եղբայր». Մրմ. 76.

Ըսկի չունիմ դադար, ըսկի չունիմ
քուն,
Նօթ տարի է յինէ չունին մէկ խա-
բար...

Խալու խալաւ, խալու Ասուած փրկէ
զիս... և այլն:

(Տաղեր եւ խաղեր 101. Կաւ Մրմ. 41).

Ծանր է նոյնքան և պանդխտի կնոջ դրու-
թիւնը, որ օրն ի բուն սպասում է իր ամուսնուն.

Վանայ չիւմ Պօլիս մէկ էօրէօսկեցի,
Շատ կարիք—կուրբաթ՝ ոտով դար-
ձուցի,

Արէ, եւր, արէ, արէ, ջան արէ,
Վալլահ կումեռնեմ, խոցեռի խաւ է...

(Մրմ. 131)

Տաճկաստանում գլխաւոր պանդխտավայրը
—Ստամբօլն է (Կ.-Պօլիս), ուր գլխում են
տաճկահայերը աշխատելու համար.

(Եօրն օր, եօր գիշեր, Մրմ. 93)

Երթամ Ասամբօլ

Դատիմ փարա բօլ,

Իմ եարի համար

Առնիմ ջուխտ մի սօլ.

Իսկ Ռուսաստանում՝ Բագուն, Բաթումը,
Թիֆլիսը յաճախ յիշուում են, ինչպէս և «Ուռու-
սէթը» (Ռուսաստան), պանդխտական երգերի
մէջ: Ահաւասիկ մի գեղեցիկ նմուշ, որտեղ սըր-
տառու լեւրով նկարագրւում է ապարանցի
(կուլաբի գիւղից) Արշակի մահը (խեղդելը
Սեանայ լճում).

Նս Արշակն եմ կուլաբեցի,
Գիշեր ցերեկ լօղկէն մացի,
Ճարս կտրաւ, նստայ լացի,
Նարիս խօսքեր սրտիս մացին.
Շօրօրան Սալաթ, շօրօրան (Արշակի կինը),
Լօղկէն Արշակին կօրօրայ:

— Բերէք, դրէք իմ ջուխտակ սօլ (Սալաթը)
Երթամ, տեսնեմ Արշակիս գօլ (լիճը).

Սկսած սրտով, մտքամոլոր

Ճանապ երթամ ոլոր-մոլոր և այլն.

(Մրմ 162)

Պանդխտական երգերի մէջ էլ ժողովուրդը
գլխում է բնութեան երևոյթներին կամ թրու-
չուններին՝ կռուակին, սոխակին (բիւբիւլին),
ծիծեռնակին և այլն իր «դարիպից» խաբրիկ
ստանալու համար (Մրմ. 73. „Կանչէ՛, կռուակ,
կանչէ՛“) և այլն:

Համառօտելով մեր ասելիքը պանդխտական
երգերի մասին, պէտք է նկատել, որ նրանց մէջ
պանդխտի հոգին մի անյատակ անդունդ է, որ
կեանքից իր արդար պահանջներն ունի, և երբ
կեանքը մերժում է նրան գոհացում տալ, նա
յենւում է իր վրայ այդ պահանջների ամբողջ
բարոյական ծանրութեամբ: Առեւ, նրա շուրջը
կազմւում է մի մռայլ մթնոլորտ, որ բարդում,
դարձնում է պանդխտի ցաւը աւխաւհալին ցաւ
(veltschmerz): Այդ բոլորին նա արդէն յետ է
մղում իրենից օտար կեանքի մոլորացիկ վայելք-
ները, որովհետեւ դժւար է նախ մոլորալ և ապա
վայելել...



ՀՀ Ազգային գրադարան



NL0367723

63.825

